ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2

ք.Երևան

22 նոյեմբերի 2017թ.

ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Անուշ Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 24000000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2018թ. տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	Ա/Ձ Անուշ Պետրոսյան
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	ք. Երևան, Արշակունյաց 5
հ/հ 900013220026	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930041213670100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 49557658
Աշխատակազմի ղեկավար	
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72511500/303		դրամ	15000000	1		Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.12.2018թ.
2	72511500/303		դրամ	9000000	1		Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 15.12.2018թ.

Չ/Բ համար	Ծառայությունների անվանումները	Միավորի գինը /ՀՀ դրամ/
	Չափաբաժին 1 **Համակարգչի և օժանդակ սարքավորումների սպասարկման ծառայություններ**	
	Համակարգիչ	
1	Դիագնոստիկա	100
2	Պրոֆիլակտիկա	200
3	Սերվերի դիագնոստիկա	100
4	Բոլոր տեսակի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրում	100
5	Սերվերի ընդհանուր սպասարկում ,կարգաբերում վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	2000
6	Համակարգիչների ծրագրային սպասարկում :	100
7	Համակարգիչների վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը ,համակարգչային տեխնիկան համալրված է հետևյալ պահեստամասերով (ՀԴԴ 500 ԳԲ, ՀԴԴ 1 ՏԲ ,ՀԴԴ 2 ՏԲ , RAM DDR 1,DDR2,DDR 3,DDR 4,սնուցման բլոկ 550w, 650w ,մայրական սալիկ H-61, H-81 ,775 socket, SVGA 1GB, 2GB, CPU Core i3, Core i5, G1820, G3220 , DVD-RW և այլն) պահեստամասերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	5000
	Նոթբուքի	
8	Դիագնոստիկա	100
9	Պրոֆիլակտիկա	200
10	Բոլոր տեսակի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրում	200
11	HP, DELL,Toshiba նոթբուքերի վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը ,չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	1000
	Մոնիտորի	
12	Դիագնոստիկա	100
13	Պրոֆիլակտիկա	200
14	HP,Dell,Samsung ,LG մոնիտորների վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	1000
	Անխափան սնուցման սարք	
15	Դիագնոստիկա	100
16	Պրոֆիլակտիկա	100
17	APC, Mercury ,powercom անխափան սնուցման սարքի վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	1000

	Սկաների	
18	Դիագնոստիկա	100
19	Պրոֆիլակտիկա	100
20	HP,Canon ,Xerox ,Samsung,Lexmark սկաներների վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	1000
Ընդամենը՝		12 800

	Գլուխ 2 Տպիչ և պատճենահանող սարքերի սպասարկման ծառայություններ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
	Լազերային տպիչի	
21	Քարթրիջների լիցքավորում (առանց տոների)	200
22	Կատարողը պետք է իրականացնի HP,Canon քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը(տոներ, թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով:	300
23	Կատարողը պետք է իրականացնի Samsung, Xerox քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը (տոներ,թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով	300
24	Կատարողը պետք է իրականացնի Lexmark քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը (տոներ, թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով	300
25	Կատարողը պետք է իրականացնի HP,Canon տպիչների վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն,ռետինե լիսեռ,ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	300
26	Կատարողը պետք է իրականացնի Samsung, Xerox տպիչների վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն,ռետինե լիսեռ,տեֆլոնե լիսեռ, ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	300
27	Կատարողը պետք է իրականացնի Lexmark տպիչների վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն,ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	300
	Պատճենահանող սարքի	
28	Դիագնոստիկա սև	100
29	Դիագնոստիկա գունավոր	100
30	Պրոֆիլակտիկա սև	300
31	Պրոֆիլակտիկա գունավոր	300
32	HP,Canon,Xerox,Samsung,Laxmark,Kyocera, Konika Minolta պաճենահանող սարքերի լիցքավորում ներառյալ տոները և չիպը:	300
33	Կատարողը պետք է իրականացնի HP,Canon, պաճենահանող սարքերի վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն, ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, դեվելոպեր, թմբուկ, կառատռոն, ռաքել,քաշող հարթակ,վառարան,վառարանի լամպի,կառատրոնի բլոկի, ատամնանիվ, լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	300
34	Կատարողը պետք է իրականացնի ,Xerox ,samsung ,Lexmark պաճենահանող սարքերի վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն, ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ,	300

	դեվելոպեր, թմբուկ, կառատոն, ռաքել,քաշող հարթակ,վառարան,վառարանի լամպի, ատամնանիվ լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	
35	Կատարողը պետք է իրականացնի , Kyocera,Konika Minolta պաճենահանող սարքերի վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն, ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, դեվելոպեր, թմբուկ, կառատոն, ռաքել,քաշող հարթակ,վառարան, վառարանի լամպի ,ատամնանիվ լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	300
Ընդամենը՝		4000

Պարտադիր պայման

1. **Ծառայություն մատուցողը պետք է Պատվիրատուի պատվերները կատարի Պատվիրատուի ենթակա հետևյալ հասցեներում գործող ստորաբաժանումներում՝**

- **ք.Երևան Արշակունյաց 7, Խորենացի 28, Կոմիտաս 35/2, Մանանդյան 33, Բյուզանդի 1/3, ք.Արտաշատ Մարքսի 7/30, ք.Գյումրի Աբովյան 248, ք.Իջևան Վասիլյան 3, ք.Եղեգնաձոր Միկոյան 2, ք.Կապան Լեռնագործներ 5ա/1, ք.Գավառ Բունիաթյան փող. 1/2:**

2. **Համակարգչի, նոթբուքի, մոնիտորի, անխափան սնուցման սարքի, սկաների, լազերային տպիչի, թանաքաշիթային տպիչի, պատճենահանող սարքի անսարքությունների վերացման և քարթրիջի լիցքավորման համար հայտի գրանցումը հեռախոսազանգով, գրանցված հայտի հիման վրա համապատասխան հասցե մոտենալ հայտը գրանցելու օրը, ծառայությունները պետք է կատարվեն մեկ օրվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում ծառայությունները մատուցվելու են տեղում:Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումը ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:**

Քարթրիջի լիցքավորված տոների քաշը պետք է համապատասխանի գործարանի կողմից տրված կշռին՝ համապատասխանաբար ըստ տեսակի:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ստանակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Անուշ Պետրոսյան
ք. Երևան, Արշակունյաց 5
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041213670100
ՀՎՀՀ 49557658

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

22.11.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2 համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան

31 հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/,ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.11.2017թ. կնքված համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (Պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2018թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ	«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 7	Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
Հ/Հ 900013220026	Հ/Հ 1930041213670100
ՀՀ ֆինանսների նախարարության	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գանձապետական վարչություն	ՀՎՀՀ 49557658
ՀՎՀՀ 02534328	
Աշխատակազմի ղեկավար _____ Վ.Հասրաթյան	Տնօրեն _____ Ա.Պետրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
22.11.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/2
ծառայության գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատես. չափաքանակը	գնումների պլանով նախատես.միջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների. այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72511500/303	Համակարգչի և օժանդակ սարքավորումների սպասարկման ծառայություններ	1365.0	2730.0	4095.0	5460.0	6825.0	8190.0	9555.0	10920.0	12285.0	13650.0	15000.0	15000.0
2	72511500/303	Տպիչ և պատճենահանող սարքերի սպասարկման ծառայություններ	820.0	1640.0	2460.0	3280.0	4100.0	4920.0	5740.0	6560.0	7380.0	8200.0	9000.0	9000.0

Պատվիրատու

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 7
Հ/Հ 900013220026
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Վ.Հասրաթյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Կատարող

«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
Հ/Հ 1930041213670100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 49557658
Տնօրեն՝ _____ Ա.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ